

ԲԱԺԱՆՈՐԴԵԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրք. 10


վեցսմսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրք. 12

վեցսմսեայ " 6

ԿԱՆԻՍԻԿ



10
RVA

Թիւնք ետ չեն
արուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Եթէ կ'ոգե՛ք, «Հայեղի»ին մեջ աղո՛ր երեւնալ,

Պարտիք սիրուն եւ ազնիւ դեմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

(ԱՅՍՏՕՐՈՒԱՆ ԹՂԹԱՐԵՐ)

Բաղէշի առաջն. տեղապահ Տ. Եղիշէ վարդապետ գրած է Պատրիարքարան թէ տեղւոյն 12 բանտարկեալներուն դատավարութիւնը տեղի ունենալով, անպարտ դատուեր եւ ազատ արձակուեր են:

— Էջ միածնէն կը գրեն յունուար 27 թուականով թէ Տ. Մակար եպիսկ. Բարխուդարեանցի Սինոդի անդամակցութիւնը հաստատուեր է Չարէն կողմէ, ինչպէս առաջարկուած էր Ս. Հայրապետէն: Տ. Մակար եպիսկ. հայերէն լեզուով իր երդումը ընելով ընդուներ է սինոդականութիւնը, հակառակ պահանջման պրոկուրորին, որ ուսերէն երդնուլ կը պահանջէր:

— Խարբերդի առաջնորդ Պետրոս վարդապետ Բագրատունի, որուն միակ արժանիքն է եղեր-կուրծքն ի վարկախուած սուպրակ մը ճերմակ մօրուքը, այս անգամ պսակել տուեր է Բալուցի Չաղաչեան Գաբրիէլ սնուն մէկը իր հանգուցեալ եղբօրը այրիին հետ որ երեք զաւակաց մայր է եղեր: Այս դէպքը

բաւական դայթակղութիւն պատճառած է թէ ի Բալու և թէ ի Խարբերդ: Խընդիրը տեղեկագրուած է 'ի Պատրիարքարան:

— Տիգրանակերտի Որդանոցին մէջ կը պատասպարուին 40 որբեր, որոց համար տարեկան ծախք կըլլայ 280 ոսկի, սոյն գումարին 180ը Պատրիարքարանի կողմէ, 55ը տեղական նպաստներէ, 30ը ամերիկաբնակ ազգայիններէ և 5ն ալ Տիգրանակերտի մէջ էջմիածնական երկու տուներու հասոյթներէ կը հոգացուին:

— Ազդ. Հիւանդանոցին 'ի նպաստ արուելիք նուագահանդէսին կարգադիր երկսեռ մասնախումբը որոշեր է որ նուագահանդէսը տեղի ունենայ Իւնիոն Յըրանսէղի սրահին մէջ, Մարտ 12ին:

— Աբրահամ փաշա Երամեան Պետական խորհուրդին քաղաքային ճիւղին անգամ անուաներ է:

— Աղեքսանգրիաէն փետրուար 9 թուականաւ կը գրեն թէ, տեղւոյն թաղխորհուրդը Շօքոյի ազգային ագարակը 8925 անգլիական ոսկիի ծախսեր է եւրոպացիի մը, ասկէց զատ, 14,000

կանգուն ասարածութեամբ երկու դեռին ալ ծախեր է անդ լիացի վաճառականի մը:

Այս գետինները բաղդատ և ամբ իրենց ներկայացուցած պատկառելի գըրամախցիսին, իրենց արդի վիճակին մէջ աննշան հասոյթ մը կը բերեն եղեր միայն: Իսկ Նոգայի աշգային ագարակը մասնագիտական հետազոտութիւն ունեցող ձեռքերու մէջ չգտնուելուն պատճառով՝ դարձած էր հաստութեան կալուած մը ըլլալէ: Թագ խորհուրդը որոշեր է վանոնք ծախելով, զոյսցած գումարովը քաղքին կեդրոնին մէջ ընտիր կալուած մը գնել:

— Արեւելի երեքշաբթի օրուան թուոյն մէջ կը կարգանք թէ, «Թաթար Բաղարճըզի Թագ խորհրդոյ ընտրութիւնը Պուլկարիոյ այցելու հովիւ Տ Բարթոլիմէոս վարդապետի նախագահութեամբը կատարուեր և ընտրութեան մէջ զեղծումներ գործուեր է՞ր ? ? ? :

Ճշմարտութիւնը սա է որ այն միջոցին այցելու հովիւը Վառնա կը գըտնուէր և մինչև այսօր ալ հոս է. իսկ Թաթար Բաղարճըզի ընտրութեան նախագահոյը շնորհունակ Գէորգ վարդապետ Նալբանտեանն է, որ հաւանակաւ նաբար իր եւ իրեններուն չուլած մէկ քանի անձանց թաղական ընտրուելուն դէմ սրտմտած՝ ատանկ սուտով մը ելած են Պատրիարքարանը խաբելու:



— Ֆիլիպէէն Պետրոս Տէրեանեան ստորագրութեամբ նամակ մը ցաւ կը յայտնէ Տօքթ. Եազմաճեանի հաւար, որ մերժած է նամակագրին արկածի մը հետեանք վիրաւոր եղբորը նախնական և անմիջական դարմանները տալ: Միևնոյն ատեն ամբողջ Տէրէեան ընտանիքին կողմէ շնորհակալութիւն կը յայտնէ Տօքթ. Օրմանեանի որ փութացած է թէ՛ ժամանակին հասնիլ և թէ՛ մինչև վերջը դարմանել հիւանդը:

Անցեալ շաբաթ օրը տեղւոյս Ս. Սարգիս եկեղեցիին մէջ վայելուչ շքով կատարուեցաւ հանգուցեալ Տիար Պողոս Փափաղեանի յուղարկաւորութեան հանգէսը: Սոյն հան.

դէսին կը նախագահէր Պուլկարիոյ այցելու Հովիւ Գեր. Տ. Բարդուղիմէոս Ծ. Ա. Պաղճեան, որ պարագային յարմար դամբանականով մը պարզեց հանգուցելոյն բարեմասնութիւնները:

Հայ և օտարազգի առաջնակարգ վաճառական գասը ինչպէս նաև ժողովրդեան ստուար բազմութիւն մը ներկայ էր: Պուլկար եկեղեցւոյ կողմէ երկու, Յոյն եկեղեցւոյ կողմէ ալ երեք քահանաներ կը հետեւէին դազաղին: Ներկայից մէջ կը տեսնուին Վառնայի քաղաքապետը Ա. Բ. Ռանքօֆ, Մարտի վերատեսուչ Պ. Գ. Գ. Թոֆ, Երկաթուղեաց ընկերութեան տնօրէնը, և բաւական թուով կառավարական պաշտօնեայր: Գագաղին ծուպերը ու կերտները բռնած էին Հայ և օտարազգի առաջնակարգ վաճառականը: Հանգուցելոյն մարմինը ամիսիուեցաւ տեղւոյս ազգային գերեզմանատունը:

Փոխան ժողկեպարսկի

Վշտակիր այրի տիկին Թ. Պողոս Փափաղեան, որ արդէն ծանօթ էր աղքատ դասակարգին իր մարդասիրութեամբը ու ողորմածասիրութեամբը, իւր վշտաց առաջին սուր հարուածներուն տակ ընկճուած պահուն իսկ չի մոռնալով աղքատները, փափաք յայտնած էր որ բարեկամաց կողմէ զնկուելիք ծաղկեպսակներուն փոխարժէքները յատկացուին Պուլկար վերագաւնալ ուղող գաղթական չքաւորաց ճանապարհածախսին: Տիկնոջ այս մարդասիրական առաջարկը որ ՚ի Պուլկարիս իր տեսակին մէջ առաջինն է, սիրով ընդունուած էր, և հանգուցելոյն բարեկամք ծաղկեպսակներու համար վճարելիքին յանձնած էին Տիար Ա. Յովասափեանի, որ բաւական թուով աղքատ գաղթականներ այս հինգշաբթի օրը մեկնող շոգենաւով ձամբու գրաւ դէպ ՚ի Պղիս: Այս մեկնողները սրտաբուխ կ'օրհնէին հանգուցելոյն յիշատակը: Տիկին Փափաղեանի այս օրինակելի մարդասիրական արարքը Պուլկարահայոց ուշադրութեանը յանձնելով կըսենք թէ, շինու և վազանցիկ ծաղիկները կարելի է նախագասել աղքատին օրհնութիւններուն, որոնք սրտէ կը բլիսին և անկեղծ են:



Այրի Տիկին Պողոս Փափաղեան և իւր զաւակունք իրենց շնորհակալութիւնը կը յայտնեն այն ամեն հայ և օտարազգի անձնաւոր

րութեանց, որոնք հաճեցան ներկայ գտնուիլ ողբացեալ Տիրար ՊՕՂՈՍ ՓԱՓԱՋԵԱՆԻ յուղարկուորութեան և իրենց ցաւակցական ըզգացմանց հաւաստիքը տուին այս տիուր անթիւ:

Փ Ո Ւ Ն Ջ

Ինքզինքնին կը ստորնացնեն այն անձինքը, երբ ընկերականութեան մէջ իրենց ունեցած պատկասելի դիրքին յարգը չեն գիտնար:

Տիկին Պէրնար

Յախուռն շտապաւ գործելուն հետեւանքը միշտ վտանգ է:

Իօթէն Նիւ:

Ո՞վ է պատասխանատուն — Երէկուան տեսնուելիք գործը վաղուան ձգողը:

Օգթալ:

Խոհականութիւնը կը պահանջէ առանց պղտուկի գործեր, պղտուկով ձեռք բերուելիք յաղթանակն ալ այնչափ յարզի չըլլար:

Տիւտան:

Էրիկ մարդիկ՝ ընդհանրապէս կանանց հրահանգին զոհերը եղած են. կնկան խօսքով ու հրահանգով, առանց վերջը մտածելու, գործի մը միջամտողը — կարծիքը դիրքի մը տէր իսկ եղած ըլլայ — աւանդ, անպատճառ պղտուկ կը մնայ:

Ս. Լուի:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

(Ս.ժանն Բոժոժիկ և Ընկ.)

Բարիկ

«Հսոյկական յեզ. միութիւն» անունով հրապարակ եկած 7րդ (*) կուսակցութիւնը որ կը բազմապէս ուրիշ կուսակցութեան մը թափթփուքներէն, ի նպաստ քանակեցնուց ըսելով ժողովուրդէն զըրամ հաւաքելու համար ըլլած մանուշակներն մէջ անյաջող ելաւ:

(*) Կը յիշեցնենք Հնչակեան, Վերակազմեալ Հնչակեան, Գլոշակեան, Երմենակեան, Միութեանեան, Մահ գաւառաւորացեան և Հայկական յեզ. միութեանեան կուսակցութիւնք: Բոժ. — Ս. առում ու թիրոզէն պահէ, մամլիկի խօսքին նայելով, Պոլսոյ Հօծա բաշայի հոշակաւոր կէտեր այսչափ ծիւղ շուրթի եղեր:

Սեւաստարօլ

Խաչագուլի մը տաննամեայ կեանքին յորելեանը պիտի կատարուի յառաջիկայ մայիսին:

Ուլիցա Էքլիսիա

Ձրիաբար գատախօսութիւն ընել ուղղի երէն մէկուն Տիւրքի կը թոյն ընելով կէս ճամբան մնաց: Կեցոյցէ պոռտախօսութիւն:

Լօմ

Ռ. քաղաքէն կծիկը դնող փորը մենծ մօնկօլադէմ հրէշին շահատակութիւններուն ժամանակաւ պաշտպան հանդիսացող խմբակը՝ հիմա զգալով իր անիրաւութիւնը, կամաց կամաց սկսաւ կարմրիլ:

Դրդ Թագ.

Օրիորդ Զ. Մըշքըրութեան եղբորը ամառուան ճաքէթը 5 Ֆրի ծախելով, մոխրագոյն փեղոյր մը առաւ զըլխարկին և անով հարսնիք գնաց: Հետեւեալ առտու եղբայրը խնդրէն տեղեակ ըլլալով կրակ կտրեցաւ ու քրօջը զըլխարկը տարաւ անկիւնի պագալնիցարին կնկանը 2 Ֆրանքի ծախեց:

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

«Աշխարհիս մէջ ամենէն աւելի ընդհանրացած արհեստը սրն է»:

Սուղին գիտցողին մէկ եռամսեայ «Հայելի» նուէր պիտի տրուի:

Ձեփիտ

Մանօթ. — Նամակները գոց ու հացէները որոշ գրուելու են, չի մոռնալով պահարանին վրայ աւելցնել «Ձեփիւտին յանձնելի»:



ԱՆՋԱՏ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ.



Մտքին մշակութիւնը քիչ կը ներգործէ բարոյական վարքին վրայ : Կը տեսնենք մարդիկ որոնք կրթուած , դաստիարակուած , ուսումնական ըլլալով հանդերձ՝ օրինակելի վարք չունին , և շոյլներ , խմաններ կամ ախտաւորներ են : Ատկէ կը հետեի որ դաստիարակութիւնը պէտք է որ կանգնուի կրօնքի և բարոյականի սկզբունքներուն վրայ :

— Լըկուվէ ըսած է . «Եթէ բացարձակապէս ստիպուած ըլլամ ընտրութիւն մը ընելու զաւկիս համար՝ ազօթել գիտնալուն և կարգալ գիտնալուն միջև , պիտի ըսեմ՝ թո՛ղ ազօթել գիտնայ :

— Տղան առանց հաւատքի թողուլը կը նշանակէ զայն թողուլ շատ մը տարիներ առանց զօրաւոր դատողութեան , առանց հաստատուն կանոնի , առանց բանաստեղծութեան և առանց տեսլականի , որով կըլլայ անարգարարած մը ենթարկուած բնազդին եւ նիւթին ամէն ձայներուն , տկար նաւակ մը խաղալիքը եղած կիրքերուն , կասկածին և ցընորքներուն փչած ամէն հովերուն :

— Նախամեծար է այն անձը որ միջակ նկարագիր ունենալով հանդերձ՝ ընտիր դաստիարակութիւն մը առած է , քան անիկա որ ամենէն ճոխ նկարագիրը ունենալով հանդերձ յոռի դաստիարակութիւն մը առած է :

Թարգմ. Յ. Ո.

Գ Ի Ն Ե Պ Ա Ն Ի Մ Ը

ՃՇՄԱՐԻՏ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ



Հետեւեալը որ Ամերիկայի Պոյղ Սիթի քաւառը բնակող գինեպանի մը կողմէ գըրուած և ԱյտէՅօ Տէմօքքէթ անուն ամերիկեան թերթին մէջ հրատարակուած է , գիտնեմունքուն ուշադրութեանը կը յանձնենք :

«Առ մեծարոյ յաճախորդս .

Բարեկամք և ընկերք , բացած ըլլալով շքեղ խանութ մը , հոն պիտի վաճառեմ հեյուկ հուր . այս արհեստովս պատիւ ունիմ ծանուցանել ձեզ որ պիտի շատցունեմ արքեցողներ , աղքատներ ու մուրացիկներ : Անոնց պիտի ծախեմ ըմպելիքներ որոնք կը գրգռեն մարդիկը ընել վրդովում , աւազակութիւն եւ արիւնհեղուցութիւն ու ասանկով պակսեցնել հասարակութեան մխիթարութիւնը , շատցունել անոր ծախքը և վտանգել անոր բարեկեցութիւնը :

Պիտի աշխատիմ և խօսք կուտամ պատարաստել զոհեր որբանոցներու , աղքատանոցներու , բանտերու և կախաղաններու : Պիտի մատակարարեմ ալքօլը որ կաճեցունէ մահացու հարուածները , կը բազմապատկէ տառապեցուցիչ ախտերու թիւը եւ անբուժելի կընէ վանոնք : Իմ ծախելիքս շատերը պիտի զրկէ կեանքէ , ոմանք բանականութենէ , աւելի շատերը ստացուածքէ և խաղաղութենէ՝ հայրերը՝ հրէշ , կիները՝ որբ և այրի , զաւակները՝ որբ , ի մի բան տնանկներ ու մուրացիկներ պիտի հասցնեմ :

Յաջորդ սերունդին շատերը պիտի ընեմ տգէտ եւ միանգամայն վնասակար բեռ մը՝ մարդկային ընկերութեան : Պիտի ըստիպեմ մայրերը մոռնալ իրենց մանուկները ու սիրոյ տեղ պիտի տիրէ անգթութիւնը :

Երբեմն պիտի աւրեմ կրօնի պաշտօնեաներն ալ , պիտի արգիլեմ Աւետարանի յառաջդիմութիւնը , պիտի եղծանեմ եկեղեցւոյ սրբութիւնը ու առաջ պիտի բերեմ ժամանակաւոր , հոգևոր եւ յաւիտենական կորուստ :

Ու թէ որ մէկը յանդգնի հարցունել ինձ թէ ինչո՞ւ կը տեղացնեմ ժողովուրդին վրայ այս ամեն չարութիւնը . իմ լուրջ պատասխանս սա պիտի ըլլայ .

«Դրամ շահելու համարդ :

Ոգելից ըմպելիքի առուտուրը շահաւէտ է , և կան տակաւին բիրաւոր մարդիկ որ անոր վրայ կը նային զուարթ դէմքով :

Ես այս գործին համար ձեռք բերած եմ արտօնագիր, մի մեղադրէք զիս, եթէ այս ամեն չարիքը ձեր վրայ չի բերեմ, ուրիշ մը պատրաստ է բերելու:

Ես դրամով իրաւունք ձեռք բերած եմ ապականել վարքը, կորսնցնել կեանքը ու կործանել այն ամենը որոնք ինծի յաճախորդ ըլլալով ամեն օր պիտի այցելէն իմ խանութըս: Գրաւ կը գնեմ թէ պիտի ընեմ ինչ որ կը խոստանամ հոս:

Անոնք որ կուզեն ձեռք բերել վերոյիշեալ չարիքներէն իրենց անձին կամ սիրեցեալ բարեկամներու համար, կը հրաւիրուին դիմել իմ խանութս, ուր քանի մը փառայով պիտի հայթայթեմ միջոցը՝ զանոնք իրենց բաղձանքին հասցնելու համար:

ԵԱՆՔԻ

Բո՛ւ. — Այս սքանչելի ուղեցոյցը աչքի առջև ունենալէ ետքը գինետուն չի յաճախելը՝ ըստ իս՝ մեծ անխելութիւն է:



ԱՆՏԵՂԻ ԿԱՍԿԱԾԻ ՄԸ ՀԵՏԵՒԱՆՔԸ

«Անձնական տկարութիւնս դարձանելու համար, Էմսի ջուրերը գացած էի անցեալ ամառ. բնական պանդոկիս մէջ սիրուն մանկամարդուհի մը կար, որ ծիշդ իմ գացած օրս հասած էր. մտերմացանք և բարեբաղդաբար այդ միջոցին շատ բազմութիւն չըլլալուն, լաւ ժամանակ կ'անցնէինք:

- Ամուսնացած էք, հարցուցի օր մը.
- Այո, բարեկամս, պատասխանեց:
- Ապա ուրեմն ամուսիննի՞դ. . .
- Մէկ երկու օրէն կը հասնի. կարե-

ւոր գործեր ունենալուն, ստիպուեցաւ ինձմէ ամիս մը վերջը ճամբայ ելնել:

Գրեթէ այս խօսակցութենէն օր մը վերջը, գիշեր մը, դուրս ելայ սենեկէս, և մուտքիս նշմարեցի երկայն վերարկույով մարդ մը որ բարեկամուհւոյս սենեկին առջև կայնած մտիկ կընէր ներսն: Հազացի, չը գնաց, հետաքրքրուեցայ եւ այս հանելուկը հասկնալու համար հազիւ քանի մը քայլ առած էի, երբ նոյն անձունթը բարկութեամբ սանդուղէն վար խոյացաւ: Հետաքրքրութիւնս աւելի շարժեցաւ, ուստի վար իջայ, պանդոկապետէն հասկնալու համար այս խնդիրը:

— Ի՞նչ անբան մարդիկներ էք, իբր թէ պատուաւոր ճանչցուած էք, այս ի՞նչ խայտառակութիւն է, չէ՞ք խպնիր, չէք ամբշնար, անամութենէ՛ր կը պոռար մարդը:

— Բայց կը խնդրեմ, տէր իմ, հանդարտեցէ՛ք, ի՞նչ անպատեհութիւն զձեզ այդչափ բարկացուցած է, կը թախանձեր պանդոկապետը:

— Ի՞նչ մի՛, եկուր տե՛ս որ հասկնաս: Երեքնիս միատեղ վեր ելանք. կամաց մը մօտեցանք բարեկամուհւոյս դրանը ես որոշակի լսեցինք ներսի խօսքերը:

— Ա՛հ, իմ սիրուն Վալանդէնս, ինչո՞ւ բովս չես գար, թէ որ միշտ այդպէս ցուրտ պիտի վարուիս, գործիս չես գար:

Քիչ մը վերջը համբոյրներու ձայներ: — Տեսա՞ր մի հիմա, անբան, կնոջս սենեակը մարդ մը կայ եւ ո՞վ գիտէ. . .

Խօսքը բերանը մնաց, սենեկին դուռը բացուելով, տիկինը վազեց իւր ամուսնոյն վզին փարեցաւ:

— Ա՛հ, սիրելի Լիւսիէնս. որչա՞փ ուշացար, կըսէր եւ անոր այտերը կը համբուրէր:

Հապա պարոն Վալանդէ՞նը: Պանդոկին շունն է եզեր, զոր տիկինը շատ սիրելուն՝ իւր սենեակը կառնէ եզեր, առ ի զգուշութիւն:

Բ. Գ.

Գեղարդի մը

Գեղարդի մը որ տնական քանի մը պիտոյքներ գնելու համար մօտակայ քաղաքը գացեր էր, իրիկուան գիւղ վերադարձած ատեն ճամբուն վրայ տանը գրանը առջև նստող քաղաքացի պարոնի մը մօտենալով, քաղաքավարութեամբ կը հարցնէ թէ ժամը քանին է:

Քաղաքացի պարոնը՝ գիւղացին ծաղրելու մտօք կը պատասխանէ:

— Ճիշդ կենդանիներուն ջուր խմել երթալու ատենն է:

— Ուրեմն դուն ինչո՞ւ համար հոս նստեր ես — կըսէ գեղջուկը ու կանցնի կերթայ:

Ազահն ու Աղբաք

Աղբաք մը՝ ազահ մարդու մը դուռը վարնելով, ողորմութիւն կը խնդրէ. նոյն միջոցին ազահը տունէն մեկնելու վրայ ըլլալով, դուռը ինքը կը բանայ և բերանը բաց կը մնայ, տեսնելով որ աղբաքը գէմքով ճիշդ իրեն կը նմանէր, ու փոխանակ գրամական նուէր մը ընելու, զայն ծաղրելով կը հարցնէ:

— Դէմքդ ճիշդ իմ գէմքիս կը նմանի, արդեօք մայրդ ժամանակաւ մեր տունը եկած է:


— Ի՞նչա՞ր ատիկայ չգիտեմ, կը պատասխանէ, պատրաստաբան աղբաքը, բայց սա աղէկ գիտեմ որ հայրս ժամանակաւ հոս շատ կուզայ կերթայեղեր:

ԳԻՏԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ

ՎԵՍՈՒՎԻ ԲՈՐԲՈՒՈՍԸ

Զրով լեցուն ապակեայ ամանի մը խորը գետնընցէք կարմիր գինի պարունակող պղտիկ շիշ մը. սա շիշը պէտք է քոցուած ըլլայ վերէն վար նեղ ծակով մը ծակուած խցանով մը. Գիտենք որ երկու հեղուկներու խառնման տարբեր ըլլալուն հետեանքով ջուրը շիշին մէջ

կը մտնէ և հոնկէ կը վանէ գինին, որ բարակ թելի մը պէս դուրս կելլայ անկէ: Աւտիկ



այս հանրածանօթ փորձը ներկայացնելունը կարչական սիրուն հնարք մը: Գաճէ կամ պարզ հողէ լեռ մը ձեւացուցէք ջուրի ամանին տակը որուն մէջ գինիի շիշը ծածկուած ըլլայ. լեռան վերի մասին վրայ բացուած մը կը թողուք՝ գինին դուրս կլլելուն անցք մը ըլլալու համար: Ատիկայ պիտի ըլլայ հրաբուխին բերանը: Եթէ ամանին ջուրը երբեմն երբեմն յուզէք, անկէ անցնող գինին հրաբուխի մը հոգմածուփ ծուխին նմանելով, ասանկով պիտի կրնաք հանս գիտատեսին ներկայացնել Վեսուվի բորբոքման մէկ բաւական ճիշդ մանրանկարը: X

Ն Կ Ա Ր Հ Ա Ն Ո Ւ Կ

Թիւ 148 «Հայելի»ի նկարհանուկ է կարգալ այսպէս:

«Մարդոց գեղանին է կովկասցին» զոր անսխալ կարգացին հետեւեալ կարգաւ: Տ. Յ. Մազմանեան, Տ. Թիւֆէնկճեան, Գ. Աւագեան Վառնաէն փետր. 5ին. Վ. Համբուհի Շուքէնէն փետ. 7ին. Օր. Մաննիկ Ա. Փէսլեան Սօֆիայէն փետր. 7ին, Կ. Մինասեան Օսման բաղարէն փետր. 8ին. Ս. Դիլմէրեան (*) Ֆիլիպէէն փետր. 8ին. Վ. Ս. Փ. և Ն. Տօղրամաճեան Ռուսճուբէն փետր. 9ին. Հ. Տ. Յոս վակիմեան Տօղրիչէն փետր. 9ին. Ե. Գարսաբաշ Վառնաէն փետր. 9ին. Գէորգ Համբարձումեան և Սարգիս Յ. Սարգիսեան Սիւլիսդրէէն, փետրուար 10 թուականաւ:

(*) Իրաւունք ունիք, բայց ինչ կրնանք ընել. թերթը շաբաթ իրիկուան գէմ տը պարունակուն, կիրակի առտու կը յանձնենք թղթատարին:

Մ Ո Ւ Է Ռ

ԲՈՒՆԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ



(Շարունակութիւն)

Փառ. — Այր կարող ամենայնի՛. այր տազանդաւոր, (երթալով) այր լի ամենայն գիտութեամբ բնական, բարոյական (գալով) այր գիտուն գիտնագունից ամենայն հորովիւք անուանց եւ խոնար մամբք բայից. (երթալով) այր որ գիտէ զգերագրական, զառակ, զգիցաբանութիւն, եւ զպատմութիւն. (գալով) քերականութիւն, բանաստեղծութիւն, ճարտատանութիւն եւ տրամաբանութիւն (երթալով) ուսողական գիտութիւն, թուաբանութիւն, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն, փիւսկեան գիտութիւն և քիմիական գիտութիւն, (գալով) տիեզերագրութիւն, աշխարհագրութիւն, ճարտարապետութիւն. (երթալով) բժշկութիւն աստղագիտութիւն, գիմազըծութիւն, ճակատագրութիւն, ձեռնածութիւն, գետնախոյզութիւն այլովքն հանդերձ: (մեկնի)

Ծեր. — (Մինակ) Կրողը տանի ատանկ գիտունները որ մարդ մտիկ ընել չեն ուզեր, աղէկ ըսեր էին ինծի որ ասիկա շատ զրուց մարդուն մէկն էր: Երթամ մէկալը գտնեմ, ան աւելի խելօք է: Ո՛վ կայ հոն:

ՏԵՍԻՒ Դ.

Մանկասար, Ծերուն

Մանկ. — Ի՛նչ է ան պարոն Ծերուն:

Ծեր. — Պ. Պատուելի, գործ մը ունիմ, որուն համար ձեր խրատին կարօտ եմ, (մեկուսի) Հա՛ առ աղէկ է, մարդ մտիկ կընէ կոր:

Մանկ. — Պարոն Ծերուն, փոխեցէք եթէ հաճոյ կը թուի ձեզի այդ կերպ խօսիլը. մեր փիլիսոփայութիւնը կը պատուիրէ որ վճռաբար բան մը չըրուցենք, այլ ամեն բանի վրայ տարակուսով խօսինք, և մեր դատողութիւնը միշտ ՚ի կախ ձգենք, ուստի պէտք չէ որ ըսես եկայ հապա կարծեմ թէ եկայ:

Ծեր. — (Ձարմանօք) Կարծեմ մի՛...
Մանկ. — Այո՛:

Ծեր. — Տէր ողորմեա, ի հարկէ պէտք է կարծեմ, որովհետեւ անանկ է:

Մանկ. — Ատիէ ատ չելլէր. կրնայ ըլլալ որ դուն անանկ կարծես եւ անանկ եղած չըլլայ:

Ծեր. — Ինչ ըսիր, հիմա ես հոս չեմ:

Մանկ. — Հաւաստի չէ. պէտք է որ ամեն բանի վրայ տարակուսինք:

Ծեր. — Էյ հիմա ինծի հետ չե՞ս խօսիր կոր:

Մանկ. — Ինծի անանկ կերեւայ թէ հոս ես եւ կարծեմ թէ կը խօսում կոր հետդ, բայց ո՛վ գիտէ թէ անանկ է:

Ծեր. — Է՛յ կո՛ղ, ծաղր կընես կոր զիս, ահա ես ահա դուն, կարծեմն ի՛նչ է. մէկգի թող այդ բժախնդրութիւնները. մեր գործին նայինք: Ես կարգուելու փափաք ունիմ:

Մանկ. — Չիյոեմ որ ըսեմ:

Ծեր. — Կըսեմ կոր ահա:

Մանկ. — Կրնայ ըլլալ:

Ծեր. — Առնելիք աղջիկս աղւոր ու առոյգ է:

Մանկ. — Անկարելի բան չէ:

Ծեր. — Կարգըվիմ նէ աղէկ պիտի ընեմ:

Մանկ. — Կամ աղէկ կամ գէշ:

Ծեր. — (Մեկուսի) Առ քեզի ուրիշ նուագարան մը. (բարձր) Սա կը հարցնեմ թէ ան աղջիկը առնելու ըլլամ նէ աղէկ կըլլայ:

Մանկ. — Ո՛վ գիտէ ինտո՞ր կըլլայ:

Ծեր. — Գէշ կըլլայ արդեօք:

Մանկ. — Բանը գիտէ:

Ծեր. — Հոգիդ սիրես շնորհքով պատասխանէ:

Մանկ. — Իմ գիտաւորութիւնս ալ ան է:

Ծեր. — Սիրտս սիրած է այն աղջիկը:

Մանկ. — Կրնայ ըլլալ:

Ծեր. — Հայրն ալ կուտայ կոր:

Մանկ. — Ձըլլալիք բան չէ:

Ծեր. — Բայց առնելու ըլլամ նէ կը վախնամ որ դալտուս բան մը չը բուսցունէ:

(Շար.)

Մ. 2.

ՀՈՎԱՍՈՒՆ

Սիրուն բանաստեղծութեանց հասորիկ մըն է, ընթերցանութեան արժանի: Գինն է 25 սանգիմ. շատ առնողներու համար չափաւոր զեղչ: Դիմել Զարպհանէլեան գրատուն Վառնա:



Հայկական սրճարան և ճաշարան, ընթերցարան, պիլարտո, կիլլակ եւ ընտիր սիկարներ: Հաստատութիւնս բաց է ամեն օր առաւօտեան ժամը

5էն մինչև 2: Երրորդ Ափիւթիւ 388: 28րդ դոփոցին յօտիկ ի Նիւ—Եօրք:

ՆՈՐ

Ա. Զ Մ Ա Տ Ո Ւ Ն

Կ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆԻ



Սագալը չէշմէ, աղջկանց կիմնազիէի դէմը, Վառնա:

Ոսկեզօծ, կաշեկազմ, լաթակազմ և թղթակազմ եւրէպական ճաշակաւ:

Դիւրամատչելի գիններ: Կը պատրաստէ նաև վաճառականական տոմարներ եւ գպրոցական տետրակներ:

ՊԱՏՈՒՀԱՆԻՆ ՄՈՒՐՀԱԿԸ

Թատրերգութիւն 7 արարուած

ՏԻԳՐԱՆ ՄԱՆԱՎԵԱՆ

“Գայլ Վահան” ողբերգութեան հանգուցեալ հեղինակին սոյն Բ. երկն ալ կը յանձնարարուի բանասիրաց ուշադրութեանը:

Գինն է 1 Փրանք: Կեդրոնատեղին Վառնա Արևելեան տպարան: Օննիկ Բարսեղեան:

Ա. Զ. Գ.

Ներկայ 1900ի մէջ հրատարակուելիք “Վարդանանց պատերազմը կամ Վասակ Սիւնի և Վարդան Մամիկոնեան” քննական դործին տպագրութեանը գիւրութիւն մը տուած ՇԼԼալու համար այժմէն բաժանորդագրութիւն մը բացուած է. փափաքողները թող հաճին իրենց հասցէները ու բաժնեգիրը (2 Փր.) յրկել հեղինակին հասցէին.

Արտաշէս Կարապետեան (բօսթ ուսութանդ) Շուշա:

Հրատարակութենէ վերջը սոյն գիրքը պիտի ծախուի 2, 70 սանգիմի:

3—10



ՆԵՐՍԷՍ ԽԱՉԻԿԵԱՆ

և

ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵԱՆ

ՈՍԿԵՐԻՉ

Հայոց Եկեղեցիին դիմացը, Վառնա:

Ոսկերչութեան վերաբերեալ ամեն տեսակ յանձնարարութիւններ կը կատարուին գոհացուցիչ պայմաններով. արծաթի և ոսկիի վրայ ծաղկազիր փորագրութիւններ, ինչպէս նաև շատ ձեւով մատանիներ, օղեր և ապարանջաններ կը պատրաստուին: Ամէն յաճախորդներ արդէն գոհ մնացած են այս երկու վարպետներէն:

Отговорница М. СКОНОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.